



Սեպտեմբերի 29-ին տոնական տեսք էր ստացել Ծալկայի շրջանի Այազմա գյուղը: Ժողովուրդը, որ հավաքվել էր գյուղի մերձակա տարածքում, եկել էր կրկին ընթրշխնելու գուսանական երգի հմայքը, կրկին զարմանալու այս հող ու ջրով սնված, այս ժողովրդի ծոցից դուրս եկած Գուսան Հավասու ստեղծած երգ ու քառյակի, երաժշտության ու բանաստեղծության միջոցով արտահայտված գաղափարներով: Ու եկել էին հայ գուսանական արվեստի սիրահարները, Մեծն Հավասու երգի ու խոսքի երկրպագուները ներկա գտնվելու այն ավանդական երգի տոնին, որը նաև խոնարհում է հայ երգարվեստի վարպետ Գուսան Հավասու հիշատակի առջև:

